Հանրային գնումների տեղեկագիր, թողարկում 1

1. Մեկ անձից ձեռքբերումների մոնիտորինգ

Մոնիտորինգի ժամանակահատված-2015թ. հունվարի 1-դեկտեմբերի 31

Մեկ անձից գնումների մոնիտորինգի մասով ստացված հիմնական արդյունքները

- 2015թ. մեկ անձից գնման հիմքով կնքվել են մոտ 183 մլրդ դրամի պայմանագրեր, ինչը փաստում է, որ ոչ մրցակցային հիմքով գնումները շարունակում են էական տեսակարար կշիռ ունենալ պետական գնումներում,
- Շարունակվում է փոխկապակցված ընկերություններից ձեռքբերման պրակտիկան,
- Գնումների հաշվետվողականության մասով նկատվում են էական խնդիրներ,
- հաճախակիացել են դեպքերը, երբ պայմանագրում նշված չի ձեռքբերման վերջնաժամկետը

Մեկ անձից ձեռքբերումները շարունակում են բավական մեծ տեսակարար կշիռ ունենալ պետական գնումներում: Մասնավորապես e-gov.am կայքում 2015թ. համար ներբեռնված են եղել 11089 պայմանագրեր: Այդ 11089 պայմանագրերի ուսումնասիրությունը փաստում է, որ 2015թ. պետությունը մեկ անձից գնումների հիմքով գեներացրել է մոտ 183 մլրդ դրամ պայմանագրային պարտավորություն, ինչը կազմում է ընդհանուր տարեկան գնումների մոտ 70%: Աղյուսակ 1-ում ներկայացված է առավել հաճախ (40 և ավելի ընթացակարգ) մեկ անձի հիմքով պայմանագրեր կնքած պատվիրատուների ցանկը (Աղյուսակ 1):

Աղյուսակ 1. Մեկ անձի հիմքով հաճախակի ձեռքբերումներ իրականացրած պատվիրատուների ցանկը 2015թ.

	Պատվիրատու	Մեկ անձի հիմքով կատարված ընթացակարգերը, հատ	Մեկ անձի հիմքով գեներացված պայմանագրային պարտավորությունը, մլն դրամ	Որից կրթական ծառ., մլն դրամ
1	Արագածոտնի մարզպ.	454	5119	4762
2	Արարատի մարզպ.	535	7021	6301
3	Արմավիրի մարզպ.	461	7353	6600
4	Գեղ. մարզպ.	435	7227	6671
5	Լոռու մարզպ.	527	7426	6698
6	Կոտայքի մարզպ.	319	6302	5693
7	Տավուշի մարզպ.	251	4803	3632
8	Վայոց Ձորի մարզպ.	189	2231	1814
9	Սյունիքի մարզպ.	397	4808	4319
10	Շիրակի մարզպ.	579	7246	6832
11	Ֆինանսների նախ.	224	7860	
12	Քաղ.շին. նախ	96	1381	
13	ՏԿՆ	539	14925	14480
14	ՊՆ	231	2164	
15	Առողջ. նախ.	2928	72678	
16	Ոստիկանություն	222	1520	
17	ԿԳՆ	411	15670	
18	ԱԱԾ	147	212	
19	Արդարադատ. նախ	124	1113	
20	Կառավարություն	124	515	
21	Գյուղ. նախ	136	120	
22	Աշխ և սոց. հարցերի նախ.	120	627	
23	ԱԳՆ	162	160	
24	Մշակույթի նախ.	41	600	
25	Քննչական կոմիտե	67	578	
	Ընդամենը նշվածը	9719	179659	67802
	Տեսակարար կշիռը ընդհանուրում	87.6	98.3	37

Հանրային գնումների տեղեկագիր, թողարկում 1

Բացի այդ, փորձ է կատարվել վեր հանել այն մատակարարներին, որոնց հետ մեկ անձի հիմքով կնքվել են 100 մլն դրամից բարձր գնով պայմանագրեր: Պետք է նշել, որ ցանկում ներառված չեն օբյեկտիվ անհրաժեշտությամբ պայմանավորած ձեռքբերումները (կրթական և առողջապահական ծառայությունները, Աջակցություն դատապարտյալին հիմնադրամ, անշարժ գույքի վարձակալություն, փոստի ծառայություններ, ջրամատակարարում, գնումներ ՊՈԱԿ-ից, էլեկտրոէներգիա): Զտված մասնակիցների և նրանց հետ կնքված պայմանագրերի ցանկը ներկայացված է Աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2. Այլընտրանք պարունակող, սակայն ոչ մրցակցային եղանակով ընտրված խոշորագույն մասնակիցները

Պատվիրատու	Գնման առարկա	Ընտրված մասնակից	Պայմանագրային գինը, մլն դրամ
ՀՀ ֆինանսների նախարարություն	ռենտգեն սարքերի վերանորոգման և պահպանման ծառայություններ	«Արեմպա Ինթերնեշնլ» ՍՊԸ	350
ՀՀ աշխ. և սոց. հարցերի նախ.	Սոց. պաշտպ. ոլորտի տեղեկատվական համակարգի սպասարկում, շահագործում և տեղեկատվության տրամադրում	«Նորք» ՏՎԿ» ՓԲԸ	318
ՀՀ աշխ. և սոց. հարցերի նախ.	հիվանդանոցային բուժօգնություն	«Արթմեդ» վերականգնողական կենտրոն ՓԲԸ	111
ՀՀ ֆինանսների նախարարություն	վերակառուցման աշխատանքներ	«Սահակյանշին» ՓԲԸ	2376
ՀՀ ֆինանսների նախարարություն	շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքներ	«Սահակյանշին» ՓԲԸ	1193
ԿԳՆ	այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություններ	«Զանգակ-97» ՍՊԸ	308
ԿԳՆ	այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություններ	«ՄԱՆՄԱՐ» ՓԲԸ	284
ԿԳՆ	այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություններ	«ՏԻԳՐԱՆ ՄԵԾ»	127
ՀՀ ֆինանսների նախարարություն	վերակառուցման աշխատանքներ	«Սահակյանշին» ՓԲԸ	419
ՀՀ կրթության եւ գիտության նախարարություն	այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություններ	Հայաստանի Շախմատի Ակադեմիա հիմնադրամ	101
ՀՀ ֆինանսների նախարարություն	վերակառուցման աշխատանքներ	«Սահակյանշին» ՓԲԸ	204
ՀՀ պաշտպանության նախարարություն	Վարժասարքեր	«Ռադվան տեխնոլոգիա» ՍՊԸ	580
ՀՀ քաղաքաշինության նախարարություն	այլ շենքերի, շինությունների հիմնանորոգում	«Երևանշին» ՍՊԸ	264
ՀՀ ֆինանսների նախարարություն	վերակառուցման աշխատանքներ	«Սահակյանշին» ՓԲԸ	646
ՀՀ ֆինանսների նախարարություն	Շինարարարական աշխատանքներ	«Ֆիլիշին» ՍՊԸ	435
ՀՀ առողջապահության նախարարություն	ինսուլին	«Մ.Լ.Ն. ՖԱՐՄ» ՍՊԸ	225
Գեղարքունիքի մարզպետարան	Սևան քաղաքի Նաիրյան փողոցի ասֆալտապատման աշխատանքներ	«Ավտոճանապարհային մեքենաներ» ՓԲԸ	103
Կոտայքի մարզպետարան	Հրազդան, Չարենցավան, Բյուրեղավան և Առինջ համայնքների ներհամայնքային ասֆալտ	«Բալահովիտ-1» ՍՊԸ	137
ՀՀ քաղաքաշինության նախարարություն	Գույքի մատակարարում	«Գոլդեն Փելիս» Հյուրանոց» ՍՊԸ	606
Արմավիրի մարզպետարան	շինարարական աշխատանքներ	«Բաղրամյանշին» ԲԲԸ	123
ՀՀ քաղաքաշինության նախարարություն «ՔՇԻԳ»	Գույքի մատակարարում	«Վալենսիա ՀՁ» ՍՊԸ	145
Տավուշի մարզպետարան	Ճանապարհների վերանորոգման աշխատանքներ	«Սահակյանշին» ՓԲԸ	934
Կոտայքի մարզպետարան	«Աբովյանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի շենքի հիմնանորոգում	«Վ. Վարդանյան» ՍՊԸ	139

Հանրային գնումների տեղեկագիր, թողարկում 1

Վայոց ձորի մարզպետարան	վերակառուցման աշխատանքներ	«Նոր էներջի» ՍՊԸ	149
ՀՀ քննչական կոմիտե	Վերակառուցման աշխատանքներ	«Ազաթ777» ՍՊԸ	121
ՀՀ ֆինանսների նախարարություն	վերակառուցման աշխատանքներ	«Սահակյանշին» ՓԲԸ	216
Լոռու մարզպետարան	Կաթնաջուր-Շիրակամուտ ճան.ասֆալտապատում	«Արգիշտի-1» ՍՊԸ	144
ՀՀ ֆինանսների նախարարություն	շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքներ	«Սահակյանշին» ՓԲԸ	101
ՀՀ ֆինանսների նախարարություն	վերակառուցման աշխատանքներ	«Սահակյանշին» ՓԲԸ	134
ՀՀ ԿԱ ոստիկանություն	Շինարարական աշխատանքներ	«ԳՈՀԱՐԻԿ» ՍՊԸ	272
ՀՀ ֆինանսների նախարարություն	վերակառուցման աշխատանքներ	«Սահակյանշին» ՓԲԸ	160
ՀՀ պաշտպանության նախարարություն	Շինարարական աշխատանքներ	«Երևանի տնաշինական կոմբինատ» ՓԲԸ	105
ՀՀ ֆինանսների նախարարություն	զանազան կահույք	«ՎԻ ԸՆԴ ԲԻ ՍԹԱՅԼ» ՓԲԸ	250
Ընդամենը, պայմանագիրն գումար		33	11780

Աղյուսակ 2-ը մատնանշում է, որ 100 մլն դրամից ավելի գումարով կնքվել է ոչ մրցակցային ձեռքբերմանը այլընտրանք ունեցող 33 պայմանագիր, որի արդյունքում գեներացվել է ավելի քան 11.7 մլրդ դրամի պարտավորություն (ընդհանուրի ավելի քան 6%):

Բացի ԹԻՀԿ կողմից նախկինում բարձրաձայնված հիմնախնդիրների, նկատել ենք հետևյալ բացասական զարգացումները.

1) Նկատվում է փոխկապակցված ընկերություններից ձեռքբերումներ, օրինակ՝ ՊՆ հիմնադրել է ընկերություններ (Զինառ ՓԲԸ և Հենակետ ՓԲԸ), որոնց հետ ոչ մրցակցային հիմունքներով պայմանագրեր է կնքում:
2) e-gov.am կայքում բացակայում է 2015թ. մասով տեղեկատվությունը,
3) ավելի հաճախակի է դարձել դեպքերը երբ պայմանագրում նշված չի ձեռքբերման վերջնաժամկետը (գրված է մինչև կատարման ավարտը) և/կամ շինարարության դեպքում որպես ավարտման ժամկետ նշվում է շինմոնտաժման աշխատանքների հետ:
4) Կան դեպքեր երբ որպես հիմք ներկայացվում են միայն հաշիվ ապրանքագրերը կամ հանձնման և ընդունման ակտերը առանց պայմանագրերի:

2. Բողոքարկման համակարգի մոնիտորինգ

Մոնիտորինգի ժամանակահատված 2015թ. հունվարի 1-2016թ. փետրվարի 4

Բողոքարկման համակարգի մոնիտորինգի մասով ստացված հիմնական արդյունքները

1. Բողոքարկման ներկա համակարգի պայմաններում շարունակում է շատ ցածր մնալ բողոքարկված ընթացակարգերի տեսակարար կշիռը գնման կայացած բոլոր ընթացակարգերի մեջ:
2. Առկա են հիմնավոր կասկածներ, որ Բողոքարկման խորհրդի անդամների մասնակցությունը բողոքարկման քննմանը հիմնված չէ պատահական ընտրության սկզբունքի վրա:
3. Եղել են դեպքեր, երբ բողոքարկման քննություններին մասնակցել են անձինք, որոնք չեն հանդիսացել Բողոքարկման խորհրդի անդամներ:

2016թ փետրվարի 4-ի դրությամբ գնումների պաշտոնական կայքում ներբեռնված գնումների բողոքարկման խորհրդի անդամների ցանկում ներկայացված էին 80 անդամի տվյալներ: Անդամների ցանկը ներկայացված է Հավելված 1-ում:

2015թ. գնումների պաշտոնական կայքում ԲԽ-ի կողմից հրապարակված 51 վճիռներից (չհաշված սև ցուցակի մասով քննությունները), առկա է տեղեկատվություն միայն 47-ի մասին:
47 բողոքների ուսումնասիրությունը ներկայացնում է հետևյալ պատկերը.

Աղյուսակ 3. Գնումների համակարգում բողոքների քանակական բնութագիրը 2011-2015թթ.

	Առանց քննության		Բավ.		Մերժ.		Ընդամենը	
2011	6	23%	15	58%	5	19%	26	100%
2012	10	26%	17	45%	11	29%	38	100%
2013	10	20%	19	39%	20	41%	49	100%
2014	2	4%	22	45%	24	51%	48	100%
2015[1]	3	6%	20	43%	24	51%	47	100%

Այնուհանդերձ, բողոքարկման ներկա համակարգը (վճարումներ ենթադրող) չի նպաստում բողոքների քանակության ավելացմանը: Արդյունքում բողոքարկված ընթացակարգերը կազմում են կայացած ընթացակարգերի շուրջ 0.3%:

Վիճակն անմխիթար է, երբ ուսումնասիրում ենք ԲԽ անդամների մասնակցության ցուցանիշները, քանի որ ակնհայտ է, որ մասնակցության արդյունավետությունը ցածր է և հենված չէ պատահական ընտրության սկզբունքի վրա, ինչը օրենսդրության պահանջ է: 47 բողոքներից 27-ի քննությունը (57%) իրականացվել է 2 անդամների կողմից, իսկ 20-ի դեպքում քննությունն իրականացվել է 3 անդամի ներգրավվածությամբ: Ըստ այդմ բողոքների քննության մասով առկա է 114 ստորագրություն /տես Հավելված 2/:

Հավելված 2-ը մատնանշում է, որ ԲԽ 80 անդամներից նիստերին մասնակցել են միայն 38-ը: Եթե որոշ անդամների (Գոռ Ենոքյան, Մնացականյան Արման, Ոսկանյան Լուսինե) հաճախակի ընտրությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ նրանք իրավաբան են, իսկ հանձնաժողովի նախագահը պետք է ունենա իրավական գիտելիքներ, ապա մյուս հանգամանքը, երբ ԲԽ անդամների մոտ 53%-ը (կամ 42 անդամ) երբևէ չի մասնակցում բողոքների քննությանը, ազդակ է համակարգի անարդյունավետության մասին: Ավելին, 3 անձինք (Ղազարյան Վիկտորիա, Ֆրանգյան Ազգանուշ, Գևորգյան Գոռ) չնայած մասնակցում են բողոքների քննություններին, սակայն ներգրավված չեն ԲԽ ցանկում:

[1] 2016թ. Փետրվարի 4-ի դրությամբ բողոքարկման խորհրդի կողմից ուսումնասիրված բողոքների թիվը կազմում է 47 բողոք:

3. Շրջանակային համաձայնագրերի մոնիտորինգ

Դիտարկվող ժամանակահատված 2015թ. ապրիլի 1-ից 2016 փետրվարի 4[2]

Շրջանակային համաձայնագրերի մոնիտորինգի մասով ստացված հիմնական արդյունքները

1. Չնայած որոշ բարելավումների՝ կայքում շրջանակային համաձայնագրերի (ՇՀ) վերաբերյալ տվյալները չունեն հստակ ժամանակային կարգավորումներ և տեղադրվում են չկանոնակարգված պարբերականությամբ:
2. ՇՀ-ով գնումներում բավական մեծ տեսակարար կշիռ ունի ՀՀ ոստիկանությունը:

2016թ. փետրվարի 4-ի դրությամբ կայքում առկա էին միայն 2015թ հունվար-հոկտեմբեր ամիսների ՇՀ մասին տեղեկությունները /տես գծանկար 1/:

Գծանկար 1. ՇՀ գնումների շարժընթացը ապրիլ-հոկտեմբերին



Ուսումնասիրության հիման վրա կազմվել է ռիսկային մասնակիցների ցանկ, որը կարող է տրամադրվել հետաքրքրված կառույցներին:

[2]Պետք է նշել, որ գնումների պաշտոնական կայքում ՇՀ հաշվետվություններ դիտարկվող ժամանակահատվածում առկա են միայն ապրիլ-հոկտեմբեր ամիսների համար:

Հանրային գնումների տեղեկագիր, թողարկում 1

Շահերի բախման, կոռուպցիոն ռիսկերի, բյուջետային անարդյունավետության, անբավարար թափանցիկության և հաշվետվողականության օրինակներ

1. ՀՀ ԱՆ ԴԱՀԿ մեկ անձի հիմքով ավտոմեքենաների վերանորոգման պայմանագիր է կնքել Քեթրին Գրուպ ՍՊԸ-ի հետ, որի հետ ըստ մամուլում առկա տեղեկությունների առկա է փոխկապակցվածություն:
2. Ազգային անվտանգության խորհուրդը (ԱԱԽ) պարբերաբար մեկ անձի հիմքով կանոնավոր օդային փոխադրման ծառայություններ է ձեռք բերում Ինվենտ Սերվիս ՍՊԸ-ից /ՀՎՀՀ 00109644/, որը համաձայն իրենց կայքում զետեղված տեղեկությունների զբաղվում է անշարժ գույքի կադաստրային չափագրումով (հաշվառումով) և գեոդեզիայով:
3. ԱԱԽ-ն մեկ անձի հիմքով աշխատակիցների վերապատրաստման ծառայություններ է ձեռք բերում միայն Երևանի պետական համալսարան հիմնադրամից
4. Շիրակի, Արմավիրի, Սյունիքի, Գեղարքունիքի, Վայոց Ձորի, Տավուշի, Լոռու և Կոտայքի մարզպետարանների կողմից իրականացվող մեկ անձից գնումներում թեև կան ինչպես պարբերական մեկ անձի հիմքով ընտրված մասնակիցներ, այնպես էլ խոշորածավալ գնումներ/շինարարություն, որոնք իրենց բնույթով կոռուպցիոն ռիսկեր են պարունակում: Դրանք են.

4.1 ***Շիրակի մարզ*** - 19 պայմանագիր Հալդի Քոնսալթ ՍՊԸ-ի հետ 116 մլն դրամ ծավալով, «Ճանշին» ՓԲԸ-ի հետ Արթիկ համայնքի Գ. Նժդեհի փողոցի մասնակի վերանորոգում 23.6 մլն դրամի, «Գյումրու 7 հիմնական դպրոց» ՊՈԱԿ շենքի ջեռուցման համակարգի վերանորոգում, պատուհանների և դռների փոխարինման աշխատանքները Մալաք ՍՊԸ-ի հետ 24 մլն դրամ գումարով, Արգիկ ԲԲԸ-ի հետ Գյումրի համայնքի Լ. Մադոյան փողոցի մասնակի վերանորոգում և սալապատում բնական քարով (Տերյան փողոցից դեպի նախկին «Հացընդունման» ձեռնարկություն՝37.3 մլն դրամ, «Մերձմոսկովյան» ԲԲԸ-ի հետ, Ախուրյան համայնքի Նոր Ախուրյան թաղամասի ճանապարհի վերանորոգում (15 մլն դրամ),Գյումրի համայնքի Ռուսթավելի փողոցի մասնակի վերանորոգում (80 մլն դրամ), Գյումրի համայնքի Չայկովսկի փողոցի մասնակի վերանորոգում (20 մլն դրամ), «Ախուրյանի Կոռպշին»- ՍՊԸ-ի հետ ևս 3 պայմանագիր, Տ-7-24, Հառիճ-Նահապետավան-Հ-21 ավտոմոբիլային ճանապարհի (Նահապետավան համայնքի տարածք) վերանորոգում (38.6 մլն դրամ), Մարալիկ համայնքի Բարեկամություն փողոցի մասնակի վերանորոգում (26.4 մլն դրամ) և ՀՀ ՏԿԱԻ նախարարության ՓԾ Շիրակի մարզային փրկարարական վարչության շենքիտարածքի բարեկարգում (8.8 մլն դրամ):

4.2 ***Արմավիրի մարզ*** - Իմպերիալ-Տուր ՍՊԸ (237 մլն), Բաղրամյանշին ԲԲԸ (232 մլն), Սյունիք ՍՊԸ (61.7 մլն), Ագարակ ԲԲԸ (33.6 մլն):

4.3 ***Սյունիքի մարզ*** - Կապան համայնքի բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգման շինարարական աշխատանքներ Կապանի «Նորոգշին» ՍՊԸ-ի կողմից 43 մլն դրամով, Կապան համայնքի բազմաբնակարան շենքերի վերելակների վերանորոգման շինարարական աշխատանքներ «Վերելակ» ԱԿ-ի կողմից՝ 22 մլն դրամով և Կապան քաղաքի Ա. Խաչատրյանի անվ. թիվ 1 երաժշտական դպրոցի վերանորոգման շինարարական աշխատանքներ Կապանի «Նորոգշին» ՍՊԸ-ի կողմից 26.8 մլն դրամով: Նույն օրը (հոկտեմբերի 20, 2015թ) երկու մեկ անձից գնում է իրականացվել «Մեղրու ՃՇՇՁ» ՍՊԸ-ի հետ. առաջինը՝ՀՀ Սյունիքի մարզի ք. Մեղրիի թիվ 1 դպրոցի հիմնանորոգման շինարարարական աշխատանքներ՝ 74 մլն դրամով և ՀՀ Սյունիքի մարզի ք. Ագարակի դպրոցի նոր ուսումնական մասնաշենքի կառուցման շինարարական աշխատանքներ կրկին 74 մլն դրամով: Մի փոքր պարզ չէ, թե ինչպես է նման խոշորամասշտաբ շինարարությունը իրականացվելու նույն ընկերության կողմից երկու ամսում: Համանման ռիսկեր է պարունակում նույն օրը (հոկտեմբերի 26, 2015) Ոսմար ՍՊԸ-ի հետ կնքված պայմանագրերը: Առաջինը՝ Գորիս համայնքի Վանքի տափ թաղամասի բակերի բարեկարգման և ասֆալտապատման շինարարական աշխատանքներ -38.7 մլն դրամով, իսկ երկրորդը՝Գորիս համայնքի Վ. Մամիկոնյան թաղամասի բարեկարգման և ասֆալտապատման շինարարական աշխատանքներ՝ 54.7 մլն դրամով: Ուշագրավ է, որ Ոսմար ՍՊԸ-ի հետ պայմանագրի գործողության ավարտ է սահմանվել 2015թ. դեկտեմբերի 5-

ը (հանրաքվեի նախորդ օրը): Բացի այդ տարօրինակ է, որ դեկտեմբերի 11-ին նույն Ոսմար ՍՊԸ-ի հետ կնքվել է պայմանագիր նույն թաղամասի/փողոցի մասով (Գորիս ք. համայնքի Վ. Մամիկոնյան թաղամասի վերանորոգված ճանապարհի երթևեկելի մասի վերջը բարեկարգ տեսքի բերելու և սելավաջրերի հոսքերի բարեկարգված հատվածի պաշտպանության շինարարական աշխատանքներ)՝ 18.8 մլն դրամով:

4.4 ***Գեղարքունիքի մարզ*** - «Ավտոճանապարհային մեքենաներ» ՓԲԸ՝ 103 մլն, Կապավոր ՍՊԸ՝ 84 մլն, «Նիկ Դավ Գրուպ» ԲԲԸ՝56 մլն, «Շինարար-10» ՍՊԸ՝ 46 մլն, Մեծ Հիմք Ա/Կ՝ 42 մլն, «Ալ-ՄԱՍՔԱ» ՍՊԸ 35 մլն:

4.5 ***Վայոց Ձորի մարզ*** - «Եղեգնաձորի ՃՇՇ» ՓԲԸ 19.6 մլն դրամ ծավալով, «Նոր Էներջի» ՍՊԸ-ի հետ 149 մլն դրամով, «Եղեգնաձորի ՃՇՇ» ՓԲԸ՝28.1, «Հովզավ» ՍՊԸ՝ 27 մլն, «Վայքի ՃՇՇ» ՓԲԸ՝ 29.9 մլն դրամով: Հարկ է նշել, որ գնման առարկան նշված է որպես “Այլ շենքերի և շինությունների հիմնանորոգում”, ինչը լրջորեն սահմանափակում է մոնիտորինգի հնարավորությունները:

4.6 ***Տավուշի մարզ***-«Սահակյանշին» ՓԲԸ-ի հետ 903 մլն դրամի Ճանապարհների վերանորոգման աշխատանքները: Ռիսկային են թվում «Աստմարտ» ՍՊԸ-ի հետ կնքած 3 մեկ անձի պայմանագրերը 88.8 մլն դրամով, որոնցից տեղեկություններ կա միայն Կողբ համայնքի թիվ 1դպրոցի վերանորոգման և Նոյեմբերյանի համայնքի Դպրոցական թիվ 42 բազմահարկ շենք տան վերանորոգման աշխատանքների մասին (39 մլն դրամ):

4.7 ***Լոռու մարզ***-«Արգիշտի-1» ՍՊԸ՝205.8, «Ռ. Հովհաննիսյան» ՍՊԸ՝ 65.8 մլն, «Լոռի ՃՇՇ» ՓԲԸ՝ 52.7 մլն, «Տիտանյան եղբայրներ» ՍՊԸ՝ 52.3 մլն, «Մ. Սիսակյան» ՍՊԸ՝ 43.8 մլն:

4.8 ***Կոտայքի մարզ***-«Բալահովիտ-1» ՍՊԸ՝ 141.3 մլն, «Վ. Վարդանյան» ՍՊԸ՝ 139.4 մլն, «Մասիս» ԱԿ՝ 58.5 մլն, «Վարաքշին» ՍՊԸ՝ 33.6 մլն, «Նաիրիի ՃՇՇ» ԲԲԸ՝ 32.7 մլն:

5. ԱԺ-ում համակարգչային ծառայությունները մեկ անձի հիմքով կնքվում են Աննա Հարությունյանի հետ (3 մեկ անձ՝ 2.5 մլն դրամ):

6. Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 318 մլն դրամի պայմանագիրը «Նորք» ՏՎԿ» ՓԲԸ-ի հետ: «Արթմեդ» վերականգնողական կենտրոն ՓԲԸ-ի հետ 181 մլն դրամի:

7. Առողջապահության նախարարության դեպքում՝«ԿՈՍՄՈՖԱՐՄ» ՍՊԸ-ի հետ 47 մլն դրամի պայմանագիրը: «Մ.Լ.Ն. ՖԱՐՄ» ՍՊԸ-ի հետ ինսուլինի պայմանագիրը 225 մլն դրամը, Նատալի Ֆարմ ՍՊԸ-ի հետ 151.8 մլն դրամի պայմանագիրը

8. Գյուղատնտեսության նախարարության դեպքում «Եղվարդշին» ԲԲԸ-ի հետ 56.4 մլն դրամի պայմանագիրը:

9. ՀՀ կառավարության 140 մլն դրամի 20 հատ ավիափոխադրման ծառայությունները, Վեկս ՍՊԸ-ի հետ 53 մլն դրամի պայմանագրերը:

10. ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից իր ենթակայության ներքո գտնվող «Գեոդեզիա և քարտեզագրություն» ՊՈԱԿ-ի հետ կնքած 386 մլն-ի պայմանագիրը

11. ՀՀ կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեի կողմից իր ենթակայության ներքո գտնվող «Միջուկային և ռադիացիոն անվտանգության դիտատեխնիկական կենտրոն» ՓԲԸ-ի հետ 48.7 մլն դրամի պայմանագիրը

12. ՀՀ ոստիկանության խմածությունը չափող սարքերի պահեստամասերի 43 մլն դրամի մեկ անձը Գվարդիա ՍՊԸ-ի հետ: «ԱՐՄՍՏՐՈՅ» ՍՊԸ-ի հետ Նախագծերի պատրաստում, ծախսերի գնահատման համար 24 մլն դրամի պայմանագրերը, «ԳՈՀԱՐԻԿ» ՍՊԸ-ի հետ 272 մլն դրամի շինարարական աշխատանքների իրականացումը:

13. ՀՀ ԿԸՀ համակարգչային սպասարկումը իրականացնում է բացառապես ԱՁ Վարդան Մխիթարյանի հետ: Ընդ որում դրանք բոլորը իրականացվել են ընտրություններից հետո: Ուշագրավ է, որ «Բալենո սասթենիբլ գլոբալ դեվելոփմենթ» ԼԹԴ հետ 19.2 մլն դրամի թանաք՝անհետացող, թանաքի բարձիկներ պայմանագրի առարկայով մատակարարման վերջնաժամկետ է սահմանվել դեկտեմբերի 25-ը, այնինչ դրանք նախատեսված էին դեկտեմբերի 7-ի սահմանադրական հանրաքվեի համար:

14. ԿԳՆ-ի կողմից լրացուցիչ պարզաբանում է պահանջում «Կրթության ազգային ինստիտուտ» ՓԲԸ 74.2 մլն դրամի պարբերական հրապարակումների պայմանագիրը, Մանմար ՓԲԸ-ի հետ 362 մլն դրամի, «Արևիկ

հրատարակչություն» ՓԲԸ-ի հետ 41 մլն դրամի, «Էդիտ Պրինտ» ՍՊԸ-ի հետ 63 մլն դրամի, «Զանգակ-97» ՍՊԸ-ի հետ 308 մլն դրամիայլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայությունները:Կրթական օբյեկտների հիմնանորոգումն իրականացվել է Ագաթ 777 ՍՊԸ-ի հետ 35.8, որի նկատմամբ պայմանագրի կնքման ընթացքում գործ էր հարուցված:

15. ՊՆ գնումների մասով 50 մլն դրամի պայմանագիրը «Կամազ-Արմենիա» ՓԲԸ-ի հետ ավտոմեխանիկայի երաշխիքային և ետերաշխիքային սպասարկման ծառայություն համար, «Ռադվան տեխնոլոգիա» ՍՊԸ-ի հետ վարժասարքերի 580 մլն դրամի պայմանագիրը և առանձին նաև նույն «Ռադվան տեխնոլոգիա» ՍՊԸ-ի հետ 65.7 մլն դրամի պայմանագիր Վարժասարքերի նորոգման ծառայությունների գծով: Ընդ որում առաջինը հունիսի 8-ին կնքվել է վարժասարքերի նորոգման ծառայության պայմանագիրը, հետո հունիսի 17-ին վարժասարքերի ձեռք բերման պայմանագիրը:

16. «ԳԵՎՈՐԳՅԱՆ ԵՎ ՆԵՐՍԻՍՅԱՆ» ՍՊԸ-ի հետ 35 մլն դրամի շինարարական աշխատանքները: «Երևանի տնաշինական կոմբինատ» ՓԲԸ-ի հետ 105 մլն դրամի պայմանագիրը (սրա մասին կա նաև ՊՆ նվիրված հաշվետվությունում): Էլիտ Պրոդ ՍՊԸ-ի հետ 48 մլն դրամի սննդամթերքի ձեռքբերումը: Հենակետ ՓԲԸ-ի հետ, որը գտնվում է ՊՆ ենթակայության ներքո 81 մլն դրամի տպագրության պայմանագիրը:

17. ՀՀ ՏԿԱԻՆ կողմից «Ստրոյ Մաստեր Միխայիլ» ՍՊԸ-ի կողմից 37 մլն դրամի մասնագիտական ծառայությունները:

18. ՀՀ ՏԿԱԻՆ կողմից 51 մլն դրամի «Սիսիանի ԲՈՒԱՏ» ՍՊԸ-ի հետ կնքած ճանապարհների համար Մակերևույթային աշխատանքների իրականացումը: «Վայքի ՃՇՇ» ՓԲԸ-ի հետ 100 մլն դրամի հիմնանորոգման աշխատանքները:

19. ՀՀ քաղաքաշինության նախարարության կողմից «Երևանշին» ՍՊԸ-ի հետ այլ շենքերի, շինությունների հիմնանորոգումը 264 մլն դրամ գումարով, «Բաղրամյանշին» ԲԲԸ-ի հետ Սարյանի տուն-թանգարանի վերակառուցումը 51 մլն դրամով: «ՎԱԱՄ» ՍՊԸ-ն 34 մլն դրամով վերանորոգել է Հայաստանի գրողների միության 300 տեղանոց մեծ դահլիճը: Նույն ընկերության կողմից Երևանի թիվ 22 հիմն. դպրոցի հիմնանորոգման աշծատանքները 62 մլն դրամով: «Հորիզոն-95» ՍՊԸ-ի կողմից 49 մլն դրամով Հրանթ Մաթևոսյան մշակ.կենտրոնի շինարարության աշխաանքների իրականացումը:

20. Նախարարությանը 606 մլն դրամի գույք է մատակարարել «Գոլդեն Փելիս» Հյուրանոց» ՍՊԸ, ինչպես նաև 145 մլն դրամ ծավալով «Վալենսիա ՀՁ» ՍՊԸ-ն: Ընդ որում դրանք կնքվել են 2015թ. սեպտեմբերի 16-ից դեկտեմբերի 25-ի համար: Այսինքն 3 ամսվա համար, օրական մոտ 9 մլն դրամ է վճարվել ինչը առնվազն տարօրինակ է:

21. ՀՀ քննչական կոմիտեի կողմից լրացուցիչ պարզաբանում է ենթադրում «Ագաթ777» ՍՊԸ-ի հետ վերակառուցման աշխատանքների վրա 332.7 մլն դրամի ծախսը:

22. ՀՀ ՖՆ կողմից լրացուցիչ պարզաբանում է ենթադրում նույն օրը նույն գումարով 11.4 մլն դրամ նույն մասնակցի հետ երկու պայմանագրերի կնքումը նույն գնման առարկայի համար (Տոյոտա Երևան): Առնվազն տարակուսելի է ինչու ոչ մեկ պայմանագիր: «Արեմպա Ինթերնեշնլ» ՍՊԸ ՖԶԵ-ի հետ 350 մլն դրամի պայմանագրի կնքումը ռենտգեն սարքերի վերանորոգման և պահպանման ծառայությունների համար: Յուքոմ ՍՊԸ-ի հետ 89 մլն դրամի պայմանագրի կնքումը: Լսոֆտի հետ 68.5 մլն դրամի ծրագրային համակարգի սպասարկման ծառայությունների պայմանագիրը: Բացի այս պայմանագրերից առկա են բավականին շատ ռիսկային պայմանագրեր, որոնց մի մասը պայմանավորված է Դիլիջանի ուսումնական կենտրոնով: Մենք կզտենք այդ ծախսերը, որից հետո լրացուցիչ պարզաբանումների ցանկը կավելացվի:

23. Ընդհանուր առմամբ, մոնիտորինգի արդյունքները ցույց են տալիս, որ շարունակվում է անբավարար մնալ համապատասխան պետական կառավարման մարմինների հաշվետվողականության և թափանցիկության մակարդակները, ինչպես նաև բավական մեծ ծավալ են կազմում ռիսկային ձեռքբերումները՝ հիմնականում մեկ անձի հիմքով:

Հանրային գնումների տեղեկագիր, թողարկում 1

Հավելված 1. Բողոքարկման խորհրդի կազմը

ՀՀ	անուն ազգանունը	պաշտոնը
1	Գասպարյան Համլետ	ՀՀ Նախագահի աշխատակազմի փորձագիտական-վերլուծական վարչության գլխավոր մասնագետ
2	Մկրտչյան Արամ	ՀՀ կառավարության աշխատակազմի գործերի կառավարչի տեղակալ
3	Մանուչարյան Մարատ	ՀՀ ազգային անվտանգության խորհրդի աշխատակազմի գնումների և մատակարարումների բաժնի պետ
4	Մնացականյան Արման	ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի իրավաբանական վարչության պետ
5	Օհանյան Ռուդիկ	ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի տնտեսական վերլուծության և գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության պետի տեղակալ
6	Չոբանյան Ռոման	ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի գնումների գործընթացի իրականացման բաժնի պետ
7	Շախկյան Էդուարդ	ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ղեկավարի տեղակալ
8	Մխիթարյան Աննա	ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման վարչության գնումների գործի համակարգման բաժնի պետ
9	Գասպարյան Գայանե	ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանության իրավական ապահովման վարչության իրավական պաշտպանության բաժնի պետի տեղակալ, ոստիկանության մայոր
10	Ավետիսյան Հրաչյա	ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության տնտեսական վարչության ավագ խորհրդատու
11	Վարդանյան Սեդրակ	ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի ղեկավարի տեղակալ
12	Հակոբյան Էդգար	ՀՀ կառավարո ւթյանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեի աշխատակազմի ընդհանուր բաժնի պետ
13	Մնացականյան Արայիկ	ՀՀ ջրային տնտեսության պետական կոմիտեի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության ֆինանսական բաժնի գլխավոր մասնագետ-բաժնի պետի տեղակալ
14	Ենոքյան Գոռ	Հայաստանի փրկարար ծառայության նյութատեխնիկական ապահովման վարչության պետի տեղակալ-գնումների և մատակարարման բաժնի պետ
15	Սերայդարյան Հովհաննես	ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի աշխատակազմի տնտեսական բաժնի պետ
16	Մկրտչյան Հովիկ	ՀՀ հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի նախագահի խորհրդական
17	Մաթևոսյան Էդուարդ	Հայաստանի հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի գլխավոր աուդիտոր
18	Խաչատրյան Լեռնիկ	ՀՀ Արարատի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ
19	Մկրտչյան Վարազդատ	ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ
20	Թամարյան Դավիթ	ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի առաջատար մասնագետ, ապրանքների և ծառայությունների գծով գնումների համակարգող
21	Մարդյան Աշոտ	ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ
22	Հայրապետյան Ռազմիկ	ՀՀ Վայոց Ձորի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ
23	Օրդյան Ռուդիկ	Մասիսի քաղաքային համայնքի ղեկավարի աշխատակազմի գլխավոր մասնա գե տ
24	Խլոյան Ռուբեն	Վարդենիսի քաղաքային համայնքի ղեկավարի աշխատակազմի ֆինանսատնտեսական բաժնի պետ
25	Ավագյան Ավագ	Վանաձորի քաղաքային համայնքի ղեկավարի աշխատակազմի ֆինանսական բաժնի պետի տեղակալ
26	Հովհաննիսյան Արթուր	Ալավերդու քաղաքապետարանի ֆինանսական բաժնի առաջատար մասնագետ
27	Աղաջանյան Սուսաննա	Աբովյանի քաղաքային համայնքի ղեկավարի աշխատակազմի գնումների գծով մասնագետ
28	Պողոսյան Լիդիա	Բյուրեղավանի քաղաքային համայնքի գլխավոր մասնագետ-ֆինանսիստ
29	Չիլինգարյան Վարդգես	Չարենցավանի քաղաքապետի տեղակալ

Հանրային գնումների տեղեկագիր, թողարկում 1

30	Անտոնյան Բենիամին	Նոր Հաճընի քաղաքային համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղար
31	Ավետիսյան Լուսինե	Կապանի համայնքի ղեկավարի աշխատակազմի ֆինանսաբյուջետային բաժնի գլխավոր մասնագետ
32	Նիկոլայան Նարինե	Քաջարանի քաղաքային համայնքի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ
33	Հովհաննիսյան Հարություն	Գորիսի քաղաքապետարանի ֆինանսատնտեսական և եկամուտների հավաքագրման բաժնի պետ
34	Հարությունյան Աշոտ	Եղեգնաձորի համայնքի ղեկավարի աշխատակազմի ֆինանսական բաժնի պետ
35	Բուդաղյան Արտեմ	Նոյեմբերյանի քաղաքային համայնքի ղեկավարի օգնական
36	Նազարյան Մանե	Այրումի քաղաքային համայնքի ղեկավարի աշխատակազմի առաջատար մասնագետ /գլխավոր հաշվապահ/
37	Կարապետյան Լիանա	Ագարակի քաղաքային համայնքի ղեկավարի աշխատակազմի գլխավոր ֆինանսիստ
38	Խարբերդյան Կարապետ	Էջմիածնի քաղաքապետի աշխատակազմի ֆինանսական բաժնի պետ
39	Էդվարդ Գրիգորյան	«Իրավական մշակույթի զարգացման ինստիտուտ» ՀԿ-ի նախագահի խորհրդական
40	ԲաբայանՎահե	«Մեհրաբյան գիտա-ուսումնական կենտրոն» ՀԿ նախագահ
41	Թադևոսյան Ռուդիկ	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի գնումների վարչության պետ
42	Բաղդասարյան Արթուր	ՀՀ ԱԳՆ աշխատակազմի գնումների համակարգող
43	Ավետիսյան Արթուր	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի գնումների համակարգման և տնտեսական հարցերի բաժնի պետ
44	Միքաելյան Նարինե	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության աշխատակազմի ծրագրերի կառավարման վարչության ծրագրերի համակարգման բաժնի առաջին կարգի մասնագետ
45	Կարապետյան Աիդա	ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի գնումների կազմակերպման բաժնի գլխավոր մասնագետ
46	Կոշեցյան Հայկ	ՀՀ ազգային վիճակագրական ծառայության գնումների գործընթացի կազմակերպման և տնտեսական բաժնի առաջին կարգի մասնագետ
47	Մարդոյան Ռոման	ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի տնտեսագիտական վերլուծության և գնումների փաստաթղթերի ձևակերպման բաժնի գլխավոր մասնագետ
48	Հարությունյան Սամվել	ՀՀ ԱԻՆ <Արտակարգ իրավիճակների բնագավառում ծրագրերի իրականացման գրասենյակ> պետական հիմնարկի ֆինսատնտեսագիտական և գործերի կառավարման բաժնի պետ
49	Խաչատրյան Գևորգ	ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի վարիչ
50	Հովհաննիսյան Արուսյակ	ՀՀ ՏԿՆ ջրային տնտեսության պետական կոմիտեի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության ֆինանսական բաժնի գլխավոր մասնագետ-բաժնի պետի տեղակալ
51	Հակոբյան Ռաֆիկ	«Բնապահպանական ԾԻԳ» ՊՀ-ի գնումների մասնագետ
52	Գալստյան Տիգրան	ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի ֆինանսատնտեսագիտական եւ հաշվապահական հաշվառման բաժնի պետ
53	Թամրազյան Սամվել	ՀՀ սփյուռքի նախարարության աշխատակազմի Ֆինանասատնտեսական վարչության գլխավոր մասնագետ
54	Ներսիսյան Ռուդիկ	ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի պետ
55	Նամալյան Արմինե	ՀՀ ՄԻՊ աշխատակազմի գնումների համակարգող
56	Խնձրցյան Խաչատուր	ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի Քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի պետ
57	Սիմոնյան Հովսեփ	ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի Ֆինանսական և սոցիալ–տնտեսական զարգացման վարչության պետի տեղակալ
58	Սարգսյան Վոլոդյ ա	ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ
59	Մանուկյան Կարինե	ՀՀ ԱՍՀՆ սոցիալական ապահովության պետական ծառայության գնումների համակարգող
60	Սաֆարյան Վարդան	ՀՀ ՏԿՆ միգրացիոն պետական ծառայության աշխատակազմի ֆինանսահաշվապահական բաժնի առաջատար մասնագետ
61	Նալբանդյան Մարտիկ	ՀՀ գյուղ. նախ. սննդամթերքի անվտանգության պետական ծառայության աշխատակազմի գործերի կառավարման բաժնի գլխավոր մասնագետ
62	Ապերյան Արթուր	ՀՀ գյուղ. նախ. աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման վարչության ֆինանսաբյուջետային բաժնի առաջատար մասնագետ
63	Սամվելյան Երանուհի	ՀՀ ԿԸՀ աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության գլխավոր մասնագետ

Հանրային գնումների տեղեկագիր, թողարկում 1

64	Մնացականյան Հասմիկ	ՀՀ առողջապահության նախ. աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության առողջապահության էկոնոմիկայի բաժնի գլխավոր մասնագետ
65	Ոսկանյան Լուսինե	ՀՀ տրանսպորտի և կապի նախ. աշխատակազմի իրավաբանական վարչության պետի տեղակալ
66	Մարտիրոսյան Հարություն	ՀՀ մշակույթի նախ. աշխատակազմի գործերի կառավարման վարչության պետի տեղակալ
67	Ղազարյան Գուրգեն	ՀՀ ԿԱ ՊԵԿ Գործերի կառավարման վարչության գնումների և շինարարության բաժնի գլխավոր մասնագետ
68	Զաքարյան Յուրի	ՀՀ ազգային անվտանգության խորհրդի աշխատակազմի գնումների և մատակարարումների բաժնի պետ
69	Գր իգորյան Գոռ	Հայաստանի Հանրապետության դատավորների միություն
70	Գրիգորյան Արամ	Համատիրությունների նախագահների ասոցացիա
71	Հայրապետյան Գևորգ	<Ինֆորմացիայի ազատության կենտրոն> ՀԿ
72	Աբգարյան Վիգեն	ՀՀ արդարադատ. նախ. ֆինանսատնտեսագիտական վարչության ֆինանսական բաժնի պետ
73	Գրիգորյան Դիանա	ՀՀԿԱպետականգույքիկառավարմանվարչությանՀաշվապահականհաշվառմաննֆինանսատնտեսականվարչությանգնումներիբաժնիպետ
74	Արամյան Գրիգոր	ՀՀդատականդեպարտամենտիՆերքինաուդիտիվարչությանպետ
75	Հայկ Կարապետյան	ՀՀՏՄՊՊՀԻրավաբանականվարչությանպետ
76	Մարիամ Սարգսյան	ՀՀ քաղաքաշինության նախարարության Կառուցապատման ներդրումային ծրագրերի վարչության գլխավոր մասնագետ
77	Շուշան Սմբատյան	Բերդի քաղաքապետարանի Ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ
78	Սաթենիկ Զաքարյան	Մարալիկի քաղաքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ
79	ՌուզաննաՀովհաննիսյան	ԱԺ ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման վարչության գնումների բաժնի վարիչ
80	Վարդան Ավետիսյան	«Իրավունքի պաշտպան միավորում» ՀԿ

Հանրային զնումների տեղեկագիր, թողարկում 1

Հավելված 2. ԲԽ անդամների մասնակցության բաշխվածությունն ըստ նրանց ստորագրությունների

	ԲԽ անդամը	Մասնակցությունների թիվը	Տեսակարար կշիռը
1	Գասպարյան Համլետ	1	0.9
2	Մնացականյան Արման	10	8.8
3	Չոբանյան Ռոման	3	2.6
4	Շախկյան Էդուարդ	1	0.9
5	Ավետիսյան Հրաչյա	3	2.6
6	Հակոբյան Էդգար	2	1.8
7	Մնացականյան Արայիկ	3	2.6
8	Ենոքյան Գոռ	9	7.9
9	Խաչատրյան Լեռնիկ	3	2.6
10	Մկրտչյան Վարազդատ	2	1.8
11	Թամարյան Դավիթ	1	0.9
12	Օրդյան Ռուդիկ	1	0.9
13	Խլոյան Ռուբեն	1	0.9
14	Ավագյան Ավագ	1	0.9
15	Աղաջանյան Սուսաննա	3	2.6
16	Պողոսյան Լիդիա	3	2.6
17	Չիլինգարյան Վարդգես	1	0.9
18	Նիկոլայան Նարինե	3	2.6
19	Նազարյան Մանե	5	4.4
20	Խարբերդյան Կարապետ	2	1.8
21	Գրիգորյան Էդվարդ	2	1.8
22	Բաղդասարյան Արթուր	3	2.6
23	Կարապետյան Աիդա	3	2.6
24	Խաչատրյան Գևորգ	1	0.9
25	Նամալյան Արմինե	4	3.5
26	Նալբանդյան Մարտիկ	2	1.8
27	Սամվելյան Երանուհի	1	0.9
28	Մնացականյան Հասմիկ	1	0.9
29	Ոսկանյան Լուսինե	13	11.4
30	Մարտիրոսյան Հարություն	2	1.8
31	Զաքարյան Յուրի	3	2.6
32	Գրիգորյան Արամ	3	2.6
33	Հայրապետյան Գևորգ	3	2.6

Հանրային զնումների տեղեկագիր, թողարկում 1

34	Աբգարյան Վիգեն	1	0.9
35	Գրիգորյան Դիանա	2	1.8
36	Սարգսյան Մարիամ	2	1.8
37	Վարդան Ավետիսյան	2	1.8
38	Հովսեփյան Արամ[3]	1	0.9
	Ընդամենը ցանկում ներառված անդամներ	107	94
	Ընդամենը ցանկում չներառված անդամներ	7	6
	Ընդամենը	114	100%

[3]Ցանկի թարմացումից հետո այս անդամը ներառված չէ: Ամենայն հավանականությամբ դուրս է եկել անդամների ցանկից: